ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

2 հունիսի 2023 թվականի թիվ 50-Ա

ք. Երևան

ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍՈՒՄ ՍԼՈԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՓՌՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 44-րդ հոդվածի 1-ին, 5-րդ մասերի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, հիմք ընդունելով, որ օրինական ուժի մեջ մտած ՀՀ վարչական դատարանի 2023 թվականի մարտի 17-ի վճռով վերացվել է ՀՀ վարչական դատարանի 30.08.2022թ-ի որոշմամբ կիրառված՝ հանրային մուլտիպլեքսում հանրապետական սփռման մեկ սլոթի համալրմանն ուղղված մրցույթ իրականացնելու արգելանքը և Հարկադիր կատարումն ապահովող ծառայության հարկադիր կատարողի 2023 թվականի մայիսի 29-ի որոշմամբ վերացվել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության 01.09.2022թ-ի որոշմամբ կիրառված սահմանափակումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

1. 2023 թվականի հունիսի 2-ին հայտարարել հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթ:
2. Հաստատել հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթի մասին տեղեկատվությունը՝ համաձայն Հավելվածի:
3. Հրապարակել մրցույթի մասին տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի www.tvradio.am պաշտոնական ինտերնետային կայքերում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2023թ. հունիսի 2
ք. Երևան

Հավելված
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2023 թվականի հունիսի 2-ի թիվ 50-Ա որոշման

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթի մասին

1. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը՝ հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործում.
2. Սփռման տարածքը՝ Հայաստանի Հանրապետություն.
3. Սլոթերի քանակը՝ 1.
4. Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում է՝
   1) հայտ (ձևը կցվում է),
   2) փաստաթուղթ՝ տեսալսողական մեդիածառայություն մատուցողի նախանշած նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ՝ անդրադառնալով հետևյալ չափանիշներին՝
      - սեփական արտադրության հաղորդումներին,
      - հայերեն հաղորդումներին,
      - բազմակարծությանը,
      - հայտատուի տեխնիկական և ֆինանսական հնարավորություններին,
      - աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությանը,
      - ազգային, համամարդկային, հոգևոր, մշակութային մնայուն արժեքների ճանաչողությանն ու ամրապնդմանն ուղղված հաղորդումներին,
      - գործող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողների դեպքում՝ գործունեության իրականացման ընթացքում լիցենզավորման հայտով ստանձնած պարտավորություններին,
   3) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր,
   4) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների վերաբերյալ,
   5) տեղեկություններ աշխատակազմի քանակի, նրանց կրթության և մասնագիտության վերաբերյալ,
   6) էթիկայի կանոնագիր,
   7) էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները,
   8) մրցույթին մասնակցելու համար 900005164596 հաշվեհամարին «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված 500 000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը:
5. Հայտին կից փաստաթղթերը ներկայացվում են երեք նույնական փաթեթով՝ յուրաքանչյուրը թելակարված, համարակալված, վերջին թերթի հետնամասում, կարի վրա փակցված պիտակով՝ «Բաղկացած է ... թերթից» գրառմամբ («...» նշվում է թերթերի քանակը), ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում): Փաթեթները ներկայացվում են փակ ծրարով՝ ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում):

6. Հայտերն ընդունվում են 2023 թվականի հուլիսի 3-ից մինչև հուլիսի 24-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00-18:00-ը: Հայտերը և կից փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով՝ ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 28 հասցեով:

7. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 010 52 94 06 հեռախոսահամարով կամ գրել licensing@tvradio.am էլ. փոստի հասցեով:

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի նախագահ

_____ին
(անուն, ազգանուն)

ՀԱՅՏ

Սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթին մասնակցելու

Հայտատուի անվանումը _____

Գտնվելու / հաշվառման վայրը _____

Պետական գրանցման / հաշվառման համարը _____

Հեռախոսահամարը, էլ. փոստի հասցեն _____

Սփոման տարածքը _____

Տեղեկություն հեղինակազորման վերաբերյալ _____

☐ *Հաստատում եմ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 15-րդ հոդվածում նշված սահմանափակումների բացակայությունը:*

Կից փաստաթղթեր՝ _____ *թերթ:*

Հայտատու _____ _____
(անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Կ.Տ. (կնիքի առկայության դեպքում)

___ _____ _____
(օրը, ամիսը, տարեթիվը)